

Բեմ բարձրացաւ յետոյ Պ. Վարդ Ճլորեան՝ Արաբերէնի ուսուցիչը և ցոյց տուաւ դադանիքն ու առաւելութիւնները Միւիթարեան Հայրեւրոս դաստիարակութեան, անոնց ճիգը բարձր բռնելու հայ լեզուի և առճմային ուսումներուն քով՝ նաեւ տեղական լեզուն՝ արաբերէնը:

Հանգէսին Բ. մասին լսեցինք նուագախումբի «Սիրուն մանիշակ»ը, ապա Պ. Յ. Պալտեան վարժարանի ուսուցիչներէն Փրանսերէն լեզուով յայտարարեց իտալական և ֆրանսական հիւպատոսներու նուէրները, շնորհակալութիւն յայտնեց իտալական կառավարութեան որ բա-

Արիւնքնու և Գալլիկներու խումբերուն, որոնց թիւը 60ը կ'անցնէ. անոնց արշաւն ու հետաքրքրական պտոյտները Գալիքի մէջ՝ ուր մնացին հինգ օր՝ շնորհիւ ճոխ ասպնջականութեան Տիար Յակոբ Յակոբեանի, հնգետասանեակ խումբի գէպի Հումմ - Վենետիկ բախտաւոր այցելութիւնը:

Յիշեց լեզուներու ուսման երեկոյեան դասախօսութեան համար վարժարանը յաճախող քսանէ աւելի երիտասարդները, դպրոցին նուրակազմ գրագարանը ուսկից կ'օգտուին աշակերտութենէ զատ շատեր, ցոյց տուաւ Միւի

թարեանց դիտումն ու ծրագիրը՝ ի գին ամէն զոհողութիւններու: Հայ կրթելու ու լաւ դաստիարակելու իրենց ինամքին յանձնուած մանկտին. բացառեց թէ ինչպէս հետզհետէ կը բարձրանայ դպրոցին մակարդակը ու կը ձգտի հաւասարել տեղական բարձր կրթարաններուն և Մուրատ - Ռափայէլեան լիկէոնին, որուն շրջանաւարտները ուղղակի առանց պետական քննութեան այլեւայլ համալսարաններ կը մըտնեն: Երախտագիտական խօսքեր ուղղեց Տիար Ժ. Մաթոսեանի որ տարւոյս մէջ անպակաս ըրաւ իր բարոյական և նիւթական աջակցութիւնը, ինչպէս նաեւ Հայ Կաթողիկէ Աղքատախնամին՝ որ 42 տղաք պահեց վարժարանին մէջ: Ի խրախոյս աշակերտութեան և

յուրախութիւն ծնողներուն յայտարարեց թէ յատուկ մըցանակ կը շնորհուի Ստեփան Առնաուտեան աշակերտին՝ ձրիաբար աշակերտելու Մուրատ Ռափայէլեան վարժարանը: Շնորհակալութեամբ յայտարարեց թէ Տիար Լ. Մաթոսեանի նուիրած դաստակի Ժամացոյցը կը ստանայ Չըննողեան Յակոբ՝ հայերէնի մէջ յառաջագէտ. և Միւիթարեան Ընդհ. Աբբաճօր զրկած ոսկի և արծաթ մետաղները կարգապահութեան մէջ առաջին հանգիստացող երկու սաները, այսինքն Պետրոս Չիլիկիլեան և Գրիգոր Չիլիպօղոսեան:

Զեւմ շնորհակալութիւն Պրն. Հայկ Բիւրատի, որ իր հօր՝ յայտնի գրագէտ Սմբատ Բիւրատի հեղինակութիւններով ճոխացուց վարժարանին գրագարանը և գրեական նուէրներ շնորհեց աշակերտներուն: Բաշխուեցան յետոյ գրեական մըցանակներ և վկայականներ իւրաքանչիւր դասարանէն արժանաւոր եղողներուն:



Աղեքս. Միւիթ. վարժարանին Ոսմագոլումդի խումբը

րեհաճեցաւ իտալերէնի այս տարեշրջանին ձրի ուսուցիչ մը տրամադրել և դպրոցական զանազան իրեղեններ նուիրել:

Իսիսի պաշտամունքի մէհենական պարը՝ խորհրդաւոր և վեհ ապաւորութիւն ձգեց հանգիստաւաններու վրայ, ինչպէս նաեւ «Գացէք տեսէք» Հայկական պարը՝ շատ շնորհալի և աշխուժութեամբ խաղացուած՝ ծափեր իւրեց և հասարակութենէն պահանջուեցաւ կրկնել:

Ապա վարժարանին Ուսումնապետը՝ Հ. Գեորգ Վ. Ոսկեան համառօտ տեղեկատուութեամբ գըծեց վարժարանին այս տարւուան ընթացքը. յայտարարեց թէ աշակերտութիւնը հասած էր 150ի, անցեալ տարւուան մէկ երրորդ յաւելումով: Յիշեց կազմութիւնը «Միւիթարեան» նուագախումբին Ուս. Երուանդ Աղեքսանեանի անձնուէր ջանքերով. Լուսապատկերով դասախօսութիւնները տեղագրական ու ազգային հին պատմական շրջանի մասին. ստուարացումը Հայ

Զ. ԳԱՍԷՆ. - Առնաուտեան Ստեփան, Տէր Ստեփանեան Դահէն, Դահիւնեան Նուրհան:

Է. ԳԱՍԷՆ. - Չըննողեան Յակոբ, Չիլիպօղոսեան Գրիգոր, Գասապեան Կարպիս:

Ը. ԳԱՍԷՆ. - Ա. (խուշի) Ասատուրեան Կարօ, Միւիթանեան Արիս, Չորլեան Եղիա:

Բ. (խուշի) Թոսուեան Ժիրայր, Չուլաճեան Արամ, Մարտիկեան Ժիրայր:

Թ. ԳԱՍԷՆ. - Պետրոսեան Չոհրապ, Օտապաճեան Արսէն, Ներսէսեան Արա:

Ժ. ԳԱՍԷՆ. - Չուլաճեան Երուանդ, Թօփալեան Գրիգի և Փափաղեան Պօղոս:

Ասոնցմէ զատ Ֆրանս. հիւպատոսի զրկած նուէրներուն արժանացան՝ Զաքարեան Յ., Սալաքեան Լեւոն: Իսկ իտալական զրկածներուն՝ Առնաուտեան Ս., Չիլիկիլեան Պ., Աշոտեան Յովսէփ, Ասատեան Պետրոս, Պէղաճեան Խամոն, Եղիազարեան Հրանտ, Թաշաճեան Եղուարդ, Գալուստեան Լեւոն, Ճիպլիւեան Վահան, Տօլապաճեան Վահրամ, Անուրեան Պօղոս, Լուսարարեան Մկրտիչ, Միքայ Միշէլ:

Ուրախ և երջանիկ մեկնեցան ծնողները և հրաւիրեալները, ջերմապէս ինքնակցելով Տեսչութեան՝ քիչ Ժամանակի մէջ ձեռք բերուած մեծ յաջողութեան համար:

ԱՂԵՔՍԱՆԳՐԻԱ ՄԻՒԹ. ՎՐԺ. ՍԱՆԵՐԸ ՀՈՒՄ - ՎԵՆԵՏԻԱ

Այս երկրորդ անգամ է որ շնորհիւ Աղեքսանդրի Միւիթ. վարժարանի ձեռնբեց և անխնջ Տեսչ. Հ. Փերոբէ Վ. Զաքարեանի ջանքերուն մեր աշակերտութեան ընտրանին բախտն ունեցաւ, այս տարի կրկնապատիկ թուով, 15 հոգի, այցելելու չքնաղ ու գեղարուեստական իտալական, հսկողութեան և ինամքին տակ սերելի և անձնուէր ուսուցիչ Պրն. Վարդ Ճլորեանի:

Ի սկզբան բանակումի կեանք մը Հումի Monte Sacro բլուրին վրայ՝ 6000 իտալ և օտար տղոց հետ՝ առանձին «Միւիթարեան» բաժինով, երբ առիթ կը տրուէր այցելելու յաւիտենական Հումի հեթանոսական ու քրիստոնէական հոյակապ յուշարձանները՝ Մուսսոլինիի հանձարով կարծես նոր փառք և փայլ վերստացած:

Ուխտաւորի կարօտով և սիրով

էր որ ապա վենետիկ անցուցին 5-օր. հիւրասիրուած նախ Մուրատ-Ռափայէլեան վարժարանին մէջ, յետոյ Ս. Վաղարու վանքը 8 Սեպտեմբերին՝ Միւիթ. Միաբանութեան հիմնադրութեան ուխտական - նուիրական օրը, ուր վայելեցին Ընդհ. Աբբաճօր ձայնաւոր պատարագի արարողութիւնը՝ Հայ ծէսին բովանդակ չքեղութեամբ:

Վանքի թանգարանին, գրատուններուն, թանկագին գրչադիւրներուն այցելութիւնը բացառիկ հաճոյքով և հետաքրքրութեամբ այլեւցին մեր տղաքը, ապա ուխտական երկիւղած համբոյր տուին Միւիթար Աբբաճօր դամբանին՝ վանքին տաճարին մէջ և Ալիշանի վանքին յատուկ գերեզմանոցին մէջ սրբաբոյր լուծեան և նոճիներու հովանիին տակ, հանգէպ պայրընեան դարաւոր ձեթենիներուն որ կը հսկեն անդադար խաղաղութեան խորհուրդով:

Վենետիկ գեղարուեստական զմայելի յուշարձաններէն յետոյ մեր տղաք հրաւիրուեցան ագնուօրէն տեսնելու նաեւ Ալպեան լեռներու ոտքերուն տակ գեղածիճաղամարանոցները Մուրատ - Ռափայէլեան վարժարանին՝ Աղուլի մէջ, ուր տեղի կ'ունենար կարօտալի հանգիստով Միւիթարեան վարժարաններու աշակերտութեան, Մուրատեան Վրժ.ի սաներ՝ իտալիա արձակուրդի, Մուրատ - Ռափայէլեաններ, Ատիս - Ապէպայինները և իրենք Աղեքսանդրեան խումբը:

Մերալի ընդունելութիւն, եղբայրական հիւրասիրութիւնը դժբախտաբար երազ կը սահէին. նոյն տեսարանները կը կրկնուէին Ս. Զենոն՝ Միւիթ. Հայրերու գեղեցիկ ամարանոցին մէջ. հիւրասիրութիւն, ճաշ և գուրգուրալի վերաբերում՝ Հայրերուն մեր տղոց հանդէպ:



Կը յաջորդէր վերադարձը վենետիկ, նորէն պտոյտներ, հրաժեշտի ողջոյն Ս. Ղազարու գոջար կողմէն և բարի աղգանութեամբ Հայրերուն ու մեկնում դէպի Հոռոմ — Նափուրի Սեպտեմբեր 13ին:

Հարկ կայ ըսել թէ սրաի որպիսի հըր-ճուռնք, ինչքան յիշատակներ գեղեցիկ ու սրբազան օծեցին մեր սաներու հոգին, ու ա-նոնք գոհ և երջանիկ պիտի պահեն նախանձով ու գուրգուրանքով այդ ամէնը որպէս հոգեկան հարստութիւն միանգամայն կրթիչ և սփոփա-րար իրենց ամբողջ կեանքին մէջ:

ՈՒՂԵՅԻՑ

ՈՒՍ. Ն. ԵՕՐԿԱ ԵՒ ՌՈՒՄԷՆ ՌԻՍՈՒՑԶՈՒ-ՀԻՆԵՐ Ի Ս. ՌԱՓ. ՎՐԺ. ԵՒ Ս. ՂԱԶԱՐ

Տարւոյս հայ և օտար բազմութիւ ականաւոր այցելուներու շարքէն որոնք Ս. Ղազար եկան՝ կը յիշենք հոս Ուս. Եօրկայինը՝ Յունիս 3-ին:

Մեծ գիտնականը որ վերջերս կրկին քաղա-քական բարձր պաշտօն ստացաւ՝ իբրեւ անգամ ռուսական թագի բարձրագոյն խորհուրդին՝ նախորդ անգամներուն պէս մինակ չէր, այլ իրեն շքախումբ կազմած կը բերէր Հոռոմի Ռումա-նական դեսպանը, և վէլէնի տէ Մունթէի մի-սինարուհիները, այսինքն ուսուցչուհիներ՝ ու-րոնց ինք անձամբ տարուան մը շրջանին ընդ-հանուր համայնագիտական կրթական — հմտական դասեր կու տար, ինչպէս նաեւ գործնական հրա-հանգներ լեզուներուն մէջ զարգանալու:

Առաջին ընդունելութիւնը տեղի ունեցաւ Մուրատ — Ռաֆ. Վարժարանի մէջ, ուր Ուս.ին աշակերտութիւնը սքանչելի ճաշակ մը տուաւ ռումէն ժողովրդական երգին ու պարին, որոնց իմաստն ու նշանակութիւնը արեւելեան շնորհ-քով օծուն՝ կանխաւ կը մեկնէր ունկնդիրնե-րուն՝ նոյնինքն Ուս. Եօրկայ:

Մշակութային այդ հանգէսը կը պատուէին Ռաֆաէլ Բենիտ. Աբբասօր, Գերպ. Յովհաննէս Աբբաս. Նազլեանի հետ Միաբանութեան Հայրեր և հայ ու օտար բարձրաստիճան հիւ-րեր:

Ուս.ը խորին շնորհակալութիւն յայտնեց Միաբանութեան՝ ամէն առթիւ մեր ցոյց տուած յարգանքին և պատիւներուն համար իրեն և իր ռումէն հիւրասէր աղգին:

Հանգէսը յաւելուած մ'ալ ունեցաւ անակն-կալ երեւումովը վարժարանիս դահլճին մէջ Քարոլ Թագաւորի Նիքոլա եղբորը՝ որ ծափա-հարու թեամբ ողջունուեցաւ և ամենուն ուշա-դրութեան և յարգանքին առարկայ դարձաւ:

Երկու օր վերջ տեղի ունեցաւ պաշտօնական այցելութիւնը ի Ս. Ղազար, ու իսկապէս կըր-թական գեղարուեստական բնոյթ ունէր. Ուս.ը ինք վանքի մուտքէն սկսած էր Հայ մշակոյթի գեղօնն ընել ու տեսակները բացատրել իր հե-տեւորդներուն՝ դեսպանին և ուսուցչուհիներ-րուն:

Ընդհ. Աբբասօր կողմէն — որ հիւանդ էր — փու-թացին ընդունել ղերենք Ռաֆաէլ Բենիտ. Աթո-ռական և Քարոլաղարը և երկգագոյն Հայրեր: Աւելի քան երկու ժամ տեւեց այցելութիւնը: Ի յարգանս Ուսուցչուհիներին՝ իր հետեւորդնե-րուն առջեւ բացուեցան ոչ միայն վանքիս դրա-տունը, ձեռագրատունը և թանգարանները, այլ նաեւ բացառաբար Եկեղեցւոյ և վանքին յատուկ գանձարաններէն հանուեցան և ցու-ցադրուեցան եկեղեցական ու պատմական թան-կագին հնութիւններ ոսկի, արծաթ, մետաքս՝ միշտ հայ արուեստի վերաբերեալ:

Ճաշարանին մէջ Ուս. Եօրկայի և դեսպանին առանձին և միաներուն ալ ճոխ պատիւներ և հիւրասիրութիւն եղաւ վարդանուշով, անուշե-ղէնով և ըմպելիներով, և յետոյ նուիրուեցան ամենուն՝ գրքեր և վանքին յիշատակներ:

Միտական երգերէ վերջ, Ուս. Եօրկայ ջեր-մագին շնորհակալութիւն յայտնեց և ամէնքն ալ չափազանց գոհ մեկնեցան: Երեք ամիս վերջ Հոռոմի դեսպանը կրկին Ս. Ղազար կը վերա-դառնար բարեկամներով, անգամ մ'ալ վայե-լելու վանքին հայ հմայքը և իր երախտագի-տութիւնն յայտնելու նախորդ բացառիկ այցե-լութեան համար:

ԽՄԲ.



էջ

Հ. Մ. Ճ. — Գարդնախան և անդիսներ	
Ա. Բարիզ. — Մուրատեան վարժարան — Բա-րերարաց յիշատակին — Մարգահանդէս — Ամսվերջի հանդէս	247
Խմբ. — Բ. Վենետիկ. — Ամսվերջի հան-դէս — Մուրատ-Ռաֆ. վարժարանի	250
Թորակից. — Գ. Աղեքսանդրիա. — Ամա-վերջի հանդէս Միսթարեան վարժարանի	253
Ուղեկից. — Աղեքսանդրիոյ Միսթա-րեան վարժարանի սաները — Հոռոմ — Վե-նետիկ	255
Խմբ. — Ուս. Ն. Եօրկայ և Ռումէն Ուսուց-չուհիներ ի Մուրատ-Ռաֆ. վարժար. և Ս. Ղազար.	256

P.

P. M. Dj. — Fêtes scolaires — A. — Au Collège S. Moorat à Sèvres — A la mémoire des bienfaiteurs — Concours gymnastique — Fêtes de fin d'année.	247
Réd. — Fêtes de fin d'année au Col-lège Moorat-Raphaël de Venise	250
Correspondant. — Fêtes de fin d'année au Collège Mékhithariste d'Alexandrie	253
Touriste. — Les élèves du Collège Mékhithariste d'Alexandrie à Rome et à Venise	255
Réd. — Prof. N. Jorga et les missionai-res de Velen de Munte au collège M. R. et à St. Lazare	256

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

Անարու Տատուրեան. — Մագաղաթներ. տպ. Փարիզ, 1937, էջ 304, ֆր. 40:
Վ. Շանկար. — Նորգիր (կիլիկեան պատմա-վէտ). տպ. Աղեքսանդրիա, 1938, էջ 112.
Տորք. Վ. Թորգոմեան. — Երեմիա Չէլէպիի Քէօմիլիքեան Ստամպուլի պատմութիւն. հատ. Գ. Ազգային Մատենդ. ձեռ. տպ. Վիեննա, 1938, էջ 16 + 294, գ. ֆր. 3.
Հ. Ն. Վ. Ալիկեան. — Մատենագրական շե-տագոտութիւններ. (քննութիւն և բնագիր). հատ. Գ. Ազգ. Մատենդ. ձեռ. տպ. Վիեն-նա, 1938, էջ 1 + 406, գ. ֆր. 4.
Զ. Ասատուր. — Հարսը. տպ. Պոսթըն. Մա-տենդ. «Արմենիա». թիւ 1, էջ 48, սէնթ 50.
Ա. Թերզիպալեան. — Արծիւը իր բոյնին մէջ. տպ. Փարիզ, 1938, էջ 246, ֆր. 15.
Prof. V. Totomianiz. — Le rôle des Ar-méniens dans la civilisation mondiale. Bel-grade, էջ 148, ֆր. 40.
Յ. Մարաշեան. — Գոտապեան. — Հայրենի Տա-րեցոյց. տպ. Փլովար 1938, Ա. Տարի, էջ 160, Լեւ 40.
Կ. Սարգ. Տէր-Միրտիլեան. — Պատկերանք Բիզանդական կայսրութեան մէջ և մերձաւոր երկուցիներ Հայաստանի մէջ. (Գերմ. բնա-գրէն թրգմ. Տորթ. Ա. Աբեղեան) Մատ. Գոտ-րեան թ. 14. տպ. Երուսաղէմ, 1938, էջ 16 + 295, գ. տ. 12.
Յուշարձան Աստուածաշունչի Հայերէն րարգ-մանութեան 1500 ամեակի. — Տպ. Երուսա-ղէմ, 1938, էջ 560, 3 լիւ.

Ե. Օտեան. — Պատերազմ և... խաղաղութիւն (ընտանեկան նամականի). մատենաշար «Շանթ» թ. 5. տպ. Փարիզ, 1938, էջ 40, ֆր. 5.
Արդի Հայ Գրականութիւն «Հայ գրագէտներու բարեկամներ» Մատենդ. 11. Ա. հատոր. — Արտասահմանի գրողներ. տպ. Փարիզ, 1938, էջ 232, ֆր. 25.
Մ. Մագիստրոս Արքիպ. Տ. Մովսիսեան. — Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հա-ղարծնի, և Գաղի եկեղեցիները և վանական շինութիւնները. Գորեան Մատեն. թ. 12. տպ. Երուսաղէմ, 1938, շիւին 3.
Շ. Նարդուհի. — Երուսաղէմ, Երուսաղէմ... տպ. Փարիզ, 1938, էջ 88, ֆր. 5.
Գր. Յ. Միսթարեան. — Պարտիզակ ու Պարտի-զակցիւն. տպ. Գահիրէ, 1938, էջ 983, տու-լար 2.
Գ. Հանրիս (Թրգմ.) Շ. Ա. Ստեփանեան. — Արժիւնդներու որջը. Մատենաշար «Արաքս», թիւ 3. տպ. Աղեքսանդրիա, 1928, էջ 240, գին. Ե. Գ. 12.
Ժ. ար Ֆերոտի. (Թրգմ.) Շ. Ա. Ստեփանեան. — Փառք. Մտնդ. «Արաքս» թ. 4. տպ. Աղեքս. 1929, էջ 244, Ե. Գ. 12.
Բոյ Տիվիստ. (Թրգմ.) Շ. Ա. Ստեփանեան. — Ճալմա լա Տուպլը (Զոյգ ճալմաները) Մտնդ. «Արաքս» թ. 5. տպ. Աղեքս. 1929, էջ 365, գին. Ե. Գ. 15.
Հ. Ռայտըր Հակարտ. (Թրգմ.) Շ. Ա. Ստեփա-նեան. — Աշխարհի սիրտը, Մտնդ. «Արաքս» թ. 8. տպ. Աղեքս. 1930, էջ 550, Ե. Գ. 25.